




**ՄԻԱՎ/ՁԻԱՀ**

**ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ**



1988թ.-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի **4579** դեպք:

ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ **3174** մարդ (**69%**), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի **1405** դեպք (**31%**):

ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող քաղաքացիների **49,4%**-ը ախտորոշման պահին եղել է 25-39 տարիքային խմբում: 0-15 տարեկան երեխաների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի **78** դեպք (**1.6%**):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրողների թիվը կազմում է **3546**:

### Գրանցված ՄԻԱՎ վարակի, ՁԻԱՀ-ի և մահվան դեպքեր 2017-2021թթ.

	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
<b>ՄԻԱՎ վարակի հայտնաբերված դեպքեր</b>	358	429	448	369	425
այդ թվում՝ 0-15 տարեկանների շրջանում	6	7	4	9	3
<b>ՄԻԱՎ-ով ապրողների թիվ</b>	2215	2557	2926	3223	3546
այդ թվում՝ 0-15 տարեկանների շրջանում	41	47	50	59	62
<b>Ախտորոշված ՁԻԱՀ-ի դեպքեր</b>	144	211	173	153	197
այդ թվում՝ 0-15 տարեկանների շրջանում	3	4	2	4	3
<b>Մահվան դեպքեր</b>	99	87	79	72	102
այդ թվում՝ 0-15 տարեկանների շրջանում	2	1	1	0	0
<b>ՀՌՎ բուժում ստացողների թիվ</b>	1530	1893	2220	2345	2633
<b>ՄԻԱՎ-ով ապրողների հաշվարկային թիվ</b>		3500		3600	4850

ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն ըստ տարիքային խմբերի 2017-2022թթ.

	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.-ի հունիսի 30-ը ներառյալ	Ընդամենը (%)
Մինչև 15	6	7	4	9	3	4	1,6%
15-24	25	24	33	22	23	11	7,5%
25-39	156	215	210	177	193	110	49,3%
40-49	90	93	110	76	102	62	24,1%
50 և ավելի	81	90	90	85	104	63	17,3%
Անհայտ տարիքի	0	0	1	0	0	0	0,1%


ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն ըստ սեռի 2017-2022թթ.

	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.-ի հունիսի 30-ը ներառյալ	Ընդամենը (%)
Արական	254	293	313	251	297	181	69,5%
Իգական	104	136	135	118	128	69	30,5%

ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հեղերոսեքսուալ ճանապարհը (74,5%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (**16,7%**):  
 Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով (5,7%), մորից երեխային (1,1%), և արյան միջոցով (0,1%) ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

### ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն ըստ փոխանցման ուղիների 2017-2022թթ.

	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ. հունիսի 30-ը ներառյալ	Ընդամենը (%)
Հեղերոսեքսուալ փոխանցման ուղի	289	340	355	301	352	211	74,7%
Թմրամիջոցների ներարկային օգտագործման ուղի	40	34	38	21	26	15	16,5%
Հոմոսեքսուալ փոխանցման ուղի	17	43	49	34	38	19	5,8%
Մորից երեխային փոխանցում	5	6	3	9	3	4	1,0%
Արյան միջոցով	0	0	1	0	0	0	0,1%
Անհայտ	7	6	2	4	6	1	1,9%



**Ջոմոսեքսուալ  
փոխանցման ուղի**  
5,7%

**Թմրամիջոցների  
ներարկային  
օգտագործման ուղի**  
16,7%

**Արյան միջոցով**  
0,1%

**Անհայտ**  
1,9%

- Հետերոսեքսուալ փոխանցման ուղի
- Թմրամիջոցների ներարկային օգտագործման ուղի
- Ջոմոսեքսուալ փոխանցման ուղի
- Մորից երեխային փոխանցում
- Արյան միջոցով
- Անհայտ

**Մորից երեխային  
փոխանցում**  
1,1%

**Հետերոսեքսուալ  
փոխանցման ուղի**  
74,5%

Ըստ 2021թ.-ի ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ  
ինտեգրված կենսաբանական և վարքագծային հետազոտության (**ԻԿՎՀ**)՝  
ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի խոցելի խմբերի չափերն են՝  
թմրամիջոցների ներարկային օգտագործողներ (**ԹՆՕ**) – **14 110**,  
տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ (**SUS**) - **22 716**,  
կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք (**ԿՍԿ**) – **8 140**,  
տրանս անձինք (**SU**) – **1 015**:

<b>խոցելի խմբերի չափերն ըստ ԻԿՎՀ-ի</b>		
	<b>2018թ.</b>	<b>2021թ.</b>
<b>ԹՆՕ</b>	9 005	14 110
<b>SUS</b>	16 100	22 716
<b>ԿՍԿ</b>	4 600	8 140
<b>Տրանս անձինք</b>	150	1 015
<b>Աշխատանքային միգրանտներ</b>	100 000	–
<b>Գյուղաբնակ միգրանտներ</b>	40 000	–
<b>Քաղաքաբնակ միգրանտներ</b>	60 000	–

ՄԻԱՎ-ի տարածվածությունը խոցելի խմբերում կազմում է՝  
**ԹՆՕ**-ների շրջանում՝ **2,6%**,  
**SUS**-ների շրջանում՝ **5%**,  
**ԿՍԿ**-ների շրջանում **0,2%**,  
**SU**-ների շրջանում՝ **2,5%**:

<b>խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունն ըստ ԻԿՎՀ-ի</b>		
	<b>2018թ.</b>	<b>2021թ.</b>
<b>ԹՆՕ</b>	2,2%	2.6%
<b>SUS</b>	2,7%	5.0%
<b>ԿՍԿ</b>	0,6%	0.2%
<b>Տրանս անձինք</b>	2,0%	2.5%